Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար։ Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները։

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ։ Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում։

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին.

- 10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով։ Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն. << դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում են բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով։
- 10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով (հավելված՝ 5.2)։
- 10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով։
- 10.7 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին, ներկայացնում է ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում։ Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը բանկ ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում։

11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

- 11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝
 - 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

¹³Եթե գնման հայտով գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում 25մլն. << դրամը, ապա "բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով" բառերը փոխարիվում են "միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով" բառերով, իսկ 3-րդ պարբերության մեջ նշված <<90>> թիվը փոխարինվում է <<20 >> թվով:

- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը։ Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա :14
 - 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
 - 4) պայմանագիր չի կնքվում։
- 11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը։

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով։

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները։

- 12.2. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ։
- 12.3. Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով։
- 12.4. Սույն հրավերով սահմանված անգործության ժամկետը պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հայցային վաղեմության ժամկետ է, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման և պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված վեճերի, որոնց դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեսուն օրացուցային օր է::
- 12.5.Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում։ Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով։
- 12.6. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում։
- 12.7. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին։
- 12.8. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում։

Սույն կետով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված։

- 12.9. Դատարանը սույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն բաժնով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում։
- 12.10. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինը սույն կետով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում՝ նշելով կասեզման օրը։
- 12.11. Հայցադիմումի պատասխանը պատվիրատուն ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում։
- 12.12 Գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ

-

¹⁴ Սույն կետր խմբագրվում է րստ համապատասխան պատվիրատուի։

փաստաթղթեր Օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով։

- 12.13. Դատարանը սույն բաժնով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում։
- 12.14. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը։
- 12.15. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում։
- 12.16. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ։
- 12.17. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը։
- 12.18. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով։
- 12.19. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն հրավերի 12.10 կետով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը։
- 12.20. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում։ Դատարանը սույն կետով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում։
- 12.21. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։
- 12.22. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ հրապարակում է տեղեկագրում։
- 12.23. Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով։

ՄԱՍ II < Ր Ա < Ա Ն Գ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս։
- 1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները։
 - 1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգյերեն կամ ռուսերեն։

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ։ Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը։

Մասնակիզը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

- 2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.
- 2.2 իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի.
- 2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.
- 2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).¹⁵
- 2.5 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3)։ Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթի կամ բանկային երաշխիքի բնօրինակը։¹⁶
- 2.6 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի։ Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։ Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում։

3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով։

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը։ Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից։ Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը։ Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները։

Ծրարը և սույն իրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ)։ Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ։

- 3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտր կազմելու լեզվով նշվում են՝
- 1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայազման վայրը (հասցեն).
- 2) ընթացակարգի ծածկագիրը.
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը։
- 3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը՝ հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին։

¹⁵ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից։

¹⁶Եթե իրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ սահմանված չէ, ապա սույն կետր հրավերից հանվում է։

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ* գնանշման հարցմանը մասնակցելու

	հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը	
«Հայաստանի պետական տնտեսագիտական հ ծածկագրով հայտարարված	ամալսարան» ՊՈԱԿ-ի կողմից « ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՍԳ-1»
գնանշման hարգման	չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) հա	չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի ^{սմարը}
պահանջներին համապատասխան ներկայացնո	ում է հայտ։
	ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը	
	ռեզիդենտ։
երկրի անվանումը	
h՝	
մասնակցի անվանումը	
• հարկ վճարողի հաշվառման համարն է՝	
	հարկ վճարողի հաշվառման համարը
• էլեկտրոնային փոստի հասցեն է՝	
ţı	լեկտրոնային փոստի հասցեն
• գործունեության հասցեն է՝	
գործուսնության հանցնն է	գործունեության հասցեն
• հեռախոսահամարն է՝ հեռախո	ոսի համարը
Unitini	ն հայտարարում և հավաստում է, որ՝
ՄՈւ յս ուզ մասնակցի ա	
131, 14	
1)	-ն և Իրեն փոխապակզված անձինօ
. , մասնակցի ա	ն և իրեն փոխկապակցված անձինք _{նվանում}
	ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված
	ն պարտավորվում է ընտրված
	մասնակցի անվանում
մասնակից ճանաչվելու դեպքում, hրավերով սաի	մանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման
ապահովում . 7	
	րով գնանշման հարցման մասնակցելու շրջանակում՝
	ւ անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում
և հակամրցակցային համաձայնություն,	۶٫٫۱٫٫۰Σ۱ ۱۶۰
• բացակայում է որավերով սահմա	նված՝ին մասնակցի անվանումը
վողսվապակցված ասձանց և (վան)	h

⁷ Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են << կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, <u>Standard & Poor's</u>) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն <այաստանի <անրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով։>> բառերով։ Ընդ որում՝ նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը։

_				_
1111	 ılıah	1117111	անու	uln -

կողմից իիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս			ին
		մասնակցի անվանում	•
պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակեր դեպք։	ւպությունների	միաժամանակյա	մասնակցության
Ստորև ներկայացնում է մասնակցի անվանումը	ի իրական շ	ահառուների վերև	ոբերյալ
տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝			**
Կից ներկայացվում է մասնակցի անվանումը		կողմից	առաջարկվող
ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված	1.1-ի։		
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)	 um		

Ч. S.

^{** -} ՀՀ ռեզիդենտ հանդիասցող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝

⁻ Եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1,3-ի>> բառերով,

⁻եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում։

ՆԿԱՐԱԳԻՐ առաջարկվող ապրանքի ամբողջական

				-ն « ሩጣՏሩ-ԳሩԱጣ Ձ	Բ-23/ሀԳ-1»*
	մասնակցի անվ	անումը			
		յման շրջանակում ըստ ողջական նկարագիրը	չափաբաժիննե	ւրի ստորև ներկայ	ացնում է իր կո
l		Unu	ջարկվող ապրան	քի	
նափաբաժնի համար	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մոդելը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
մասն	սակցի անվանումը (ղեկաւ	 լարի պաշտոնը, անուն ազգանունը)			 ություն
					Ч. S.

 * լրացվում է հանձնաժողովի քարփուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում

գնանշման հարցման հրավերի

ລ⊩u

રૂ. ૧
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

1.	Կազ	ղմակերպությունը					
	1.1.	Կազմակերպության փվյալները					
1.1	1.1.	Անվանումը					
1.1	1.2.	Անվանումը լատինատառ					
1.1	l.3.	Պետական գրանցման համարը					
1.1	1.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին					
1.1	1.5.	Գրանցման հասցեն					
1.1	1.6.	Գրանցման պետությունը					
1.1	1.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և	ազգա՝	նունը			
	1.2.	Հայփարարագիրը ներկայացնող անժ	វក្រ				
1.2	2.1.	Հայտարարագիրը ներկայացնող անձի ա	յնունը	և ազգա	նունը		
1.2	2.2.	Հայտարարագիրը ներկայացնող անձի ա	լաշտոն	նը			
	1.3.	Հայփարարագրի ներկայացումը					
1.3	3.1.	Հայտարարագրի ստորագրման օրը, ամի	ոսը, տւ	սրին			
1.3	3.2.	Հայտարարագրի էջերի քանակը					
1.3	3.3.	Հայտարարագիրը ներկայացնող անձի ս	<mark>տորա</mark> զ	ֈրություն	որ		
2.		յ նետոմսերի ցուցակման տվյալները					
		Բաժնեփոմսերի ցուցակման փվյալնե	<u>ייחפ</u>				
	1.1.	Ֆոնդային բորսայի անվանումը					
2.	1.2.	Հղումը բորսայում առկա փաստաթղթերի					
	2.2.		սվաբս	սնական	ն ան	ձի ւրվյա	լները
	2.1.	Անվանումը					
	2.2.	Անվանումը լատինատառ					
	2.3.	Պետական գրանցման համարը					
	2.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին					
	2.5.	Գրանցման հասցեն					
	2.6.	Գրանցման պետությունը					
2	2.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը					
2	2.3.	1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1					
2	3.1.	Մասնակցության չափը (%)		0	11.5		
2.	3.2.	Մասնակցության տեսակը			•••	ասնակց Վմասնա	ություս կցություն
3.	Պեւ	ոության, համայնքի կամ միջազգայի	_		L L 11		13 13
٠.	3.1.		-			ojua ao	
3.	1.1.	Պետության անվանումը)· -J				
	1.2.	Համալնքի անվանումը					
3.	1.3.	Մասնակցության չափը (%)					
3.	1.4.	Մասնակցության տեսակը			_		ւսնակցություն մասնակցություն
	3.2.	Միջազգային կազմակերպության մա	սնակց	լություն	פ		15 15
3.	2.1.	Միջազգային կազմակերպության անվան	ւումը				
	2.2.	Միջազգային կազմակերպության անվան	ւումը լս	ստինատ	าเก		
3.	2.3.	Մասնակցության չափը (%)					
3.	2.4.	Մասնակցության տեսակը					Ուղղակի մասնակցություն Անուղղակի մասնակցություն
4.	_	ւկան շահառուի տվյալները					
		Անձի ինքնությունը հավասփող փվյա	լները				
4.	1.1.	Անունը					

4.1.2.	Ազգանունը			
4.1.3.	Անունը (լատինատառ)			
4.1.4.	Ազգանունը (լատինատառ)			
4.1.5.	Քաղաքացիությունը			
4.1.6.	Ծննդյան օրը, ամիսը, տարին			
4.2.		•		
4.2.1.	Փաստաթղթի տեսակը			
4.2.2.	Փաստաթղթի համարը			
4.2.3.	Տրամադրման օրը, ամիսը, տարին			
4.2.4.	Տրամադրող մարմինը			
4.2.5.				
	ՀԾՀ կամ համարժեք համարը			
4.3.	, 2:			
4.3.1.	Պետությունը			
4.3.2.	Համայնքը			
4.3.3.	Վարչատարածքային միավորը			
4.3.4.	Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը			
4.4.	Անձի բնակության հասցեն			
4.4.1.	Պետությունը			
4.4.2.	Համայնքը			
4.4.3.	Վարչատարածքային միավորը			
4.4.4.	Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը			
4.5.	Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բւ	ugwnr	ությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի	
	իաշվետու կազմակերպությունների)	J	13 1 2 1 1 4 11 11 21 11	
		h.al.	ممان مرفق البيما المرفين لا المرفي المربي	
الله الله	ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ			
	մասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկու տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կան			
		ташты		
4.5.1.	Մասնակցության չափը (%)			
4.5.2.	Մասնակցության տեսակը		Ուղղակի մասնակցություն	
	և Անուղղակի մասնակցություն Ե. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ			
□ միջոցն		uuwgu	ուս է իրավաս (փաստացի) վսրաոսվուլություն այլ	
	գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գ։	ործուն	ະກາສາມນຳ ກຸກປາກການການ ໄມມາໂ ກຸກສາມຕຸປາ ກະໄມມຸປາກການໂນ	
	գ ուսադրաասուն է աղաղ լդուազաբասազան ասեր գ. նացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկւ			
	սատասխանող ֆիզիկական անձ	2,	1 1 11 1 2 11	
	Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ըն	դերք	օգւրագործման ոլորտի հաշվետու	
	կազմակերպությունների համար)			
		برانما ا		
🗆 դաժնել	ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում մասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկու			
-	մասնակցություն իրավաբանական անձի կանոնադր			
amqna			qualitation [11.00]	
4.6.1.	Մասնակցության չափը (%)			
	3 mmmmdglojum 2004.E (/0)			
4.6.2.	Truutuulanneuvirintuulin		Ուղղակի մասնակցություն	
4.0.2.	Մասնակցության տեսակը		Անուղղակի մասնակցություն	
	բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրա	վաբան	սական անձի կառավարման մարմինների	
անդամ	ների մեծամասնությանը			
	գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հ			
	բանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տո			
[] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացն	ում է ի	րական (փաստացի) վերահսկողություն այլ	
միջոցն		ا با سگیر	ه السينين المستواد المستود المستواد المستود المست	
□ boudee	ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գr			
	նացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկւ աստելուն	ս չԷ «Ա	ս»-«ւբ» զստարի պատասջսերիս ռասապատասխանող	
	սկան անձ	u inha	thun on tithon	
4.7.	Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյս	սլ գոսղ	ичтидтичитт 	
4.7.1.	Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին			
			1	

4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության		Առանձին
իրականացումը		Փոխկապակցված անձանց հետ համատեղ
4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու		Ալո
կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է		Ωξ
պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ		2
4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները		
4.8.1. Էլ. փոստի հասցեն		
4.8.2. Հեռախոսահամարը		
5. Միջանկյալ իրավաբանական անձինք		
5.1. Կազմակերպության տվյալները		
5.1.1. Անվանումը		
5.1.2. Անվանումը լատինատառ		
5.1.3. Պետական գրանցման համարը		
5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին		
5.1.5. Գրանցման հասցեն		
5.1.6. Գրանցման պետությունը		
5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը		
5.2. Իրական շահառուի տվյալները		
5.2.1. Իրական շահառու(ներ)ի		
անունը և ազգանունը, ում համար		
կազմակերպությունը հանդիսանում		
է միջանկյալ իրավաբանական անձ		
5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի չ	<u>зпідш</u> ч	սաս փվյալսերը
5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը 5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթոթերին		
6. Լրացուցիչ նշումներ		
Lրացուցիչ փեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որո	ոսք առն	չվուս ես ոայփարարագրում լրացված կամ
լրացման ենթակա փվյալներին		

I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1)«Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

- 2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.
- 3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը։
- 2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում։ Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար։ Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1)«Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.

- 2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի։ Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.
- 3) «Վերաիսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները։ Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը։ Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ։
- 3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն։ Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
- 1)«Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն։ Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը։ Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը։ Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.
- 2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն։ Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը։ Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ։
- 4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
- 1)«Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները։ Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում։ Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարագրում լրացվում է դրանց տառադարձությունը.
- 2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.
 - 3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.
- 4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից։ Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.
- 5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն։ Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները։ Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում։ Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի

կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում։ Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փալը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայր) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն)։ Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փալը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից։ «Մասնակցության չափր» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափր՝ տոկոսալին արտահայտմամբ։ Մասնակցության չափր հաշվարկվում է՝ հիմք րնդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը։ Անուղղակի մասնակցության դեպքում, կապիտալում կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով լուրաքանչյուր նախորդ միջանկլալ կազմակերպության մասնակցության չափր, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսալին արտահալտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահալտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը։ «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին։ Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկալության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկալության վերաբերյալ.

բ. այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն։ Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով։ Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ։ Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում։ Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ. այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ. այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ. Այս ենթաբաժնի «**դ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե. այս ենթաբաժնի «**ե**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»–«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին։ Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ։ Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում։ Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

- 8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը։
- 5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում։ Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր միջանկյալ իրավաբանական անձանց քանակով։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
- 1)«Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.
- 2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ։ Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման։
- 3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման։ Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում։ Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է իղում բորսայում առկա փաստաթղթերին։
- 6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Էրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին։ Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարազաբանումներ հայտարարագրի առնչությամբ։
- 7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը։ Հայտարարագրի էջերի համարակալումը և հայտարարագրում էջերի քանակի մասին նշում կատարելը պարտադիր չէ։

^{*} լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը։

^{** 1.2} հավելվածը չի ներկայացվում մասնակցի կողմից եթե կրառելի է սույն հրավերի N 1 հավելվածով սահմանված՝ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացնելու վերաբերյալ կարգավորումը, ինչպես նաև եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ։

^{** 1.3} հավելվածը չի ներկայացվում մասնակցի կողմից եթե վերջինս հանդիսանում է << ռեզիդենտ, ինչպես նաև եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ։

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

	101	անվանումը Lange		
սագրրը կս	ստարել ներքոհիշյալ ընդհանուր գն	երով.		ՀՀ դրաւ
Չափա- բաժինների համարներ ը	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) / տառերով և թվերով /	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	<i>5</i> = <i>3</i> + <i>4</i>
1	<< <u>Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>></u>			
2	<< <u>Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>></u>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
•••				
•••				

Ч. S.

^{*} լրացվում է հանձնաժողովի քարփուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը։

^{**}եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում։

գնանշման հարցման հրավերի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (որակավորման ապահովում)

ք. Երևան		«»	20 թ.**
	,ի դեմս Ընկերության տնօրեն <u>.</u>		
Ընկերության անվանումը		Ընկերության տնօրենի անուն ազգանունը, ա	 ^{յնձնագրային տվյալները} , որը գործոււ

է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

- 1.1 Ընկերությունը մասնակցում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՍԳ-1** ծածկագրով գնման ընթացակարգին։
- 1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից։
- 1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝
- ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով։
- բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման։
- գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին։
 - դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով։
- ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար։
- 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը։ Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով։
 - 1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր։
- 1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում։ Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը։
- 1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով։
- 1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո)։

2. Այլ պայմաններ

- 2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ։
- 2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝
- 2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ
- 2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից։
- 2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ընկերության անվանումը
ընկերության հասցեն
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

4.S

Օր/ամիս/տարի

^{*} լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը։

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*				
2. Թիվ				
3.	Ներկայացման ամս	աթիվը՝ "" 20 <u>_</u> _թ.		
4. Վճարողի անվանումը, կամ անու	ւն ազգանուն (Ընկերությո	ուն ՝		
5. Վճարողին սպասարկող Ֆինան	սական կազմակերպությr	ուն (բանկ)՝		
6. Վճարողի հաշվի համարը՝				
7. Վճարողի ՀՎՀՀ՝				
8. Վճարողի ՀԾՀ՝				
9. Շահառուի անվանումը, կամ ան	ınւն ազգանուն՝ «Հայաստ	անի պետական տնտեսագիտա	կան համալսարն» ՊՈԱԿ	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)				
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 01503224				
12.Շահառուին սպասարկող Ֆինա գանձապետարան	նսական կազմակերպութ	թյուն (բանկ)՝ << Ֆինանսների	նախարարության	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N	900018001876			
14.Գումարը (թվերով և բառերով)՝				
15. Ակցեպտավորված գումարը՝ (թ	վերով և բառերով) (նախ	ւատեսված է նշված գումարի ւ	մասնակի ակցեպտ <u>ի</u>	
իամար, որը չի կիրառվում)				
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ Հ	< դրամ, AMD			
17.Գործարքի (վճարման) նպատաև	յը՝ <i>(որակավորման ապա</i>	ւիովման համար)		
18. Վճարման կատարման հիմքերլ դրանց համարները, պայմանագրի	ը՝ (Փաստաթղթերի անվա	ւնումը, այդ թվում՝ տուժանքի		
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտ	ավորված վճարում>		
20. Առդիր էջերի քանակը՝ Լ	52			
22.ա. Շահառուի ստորագրություն	ւները			
	1	21.ա. Վճարողի ստորագրո	ւթյունները՝	
	1		/	
	//			
22.p.			1	
·	Ч.S.	21.բ.	Ч.S.	
24.ա. Շահառուին սպասարկող ֆ	»ինանսական			
կազմակերպություն		23.ա. Վճարողին սպասար	կող ֆինանսական	
,	/	կազմակերպություն		
,				
	/ստորագրություն/		/	
			/ստորագրություն/	

24.բ.	Ч.S.	23.բ.	Ч.S.
24.q	"" 20 թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝	"" 20р.

^{*} Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»։

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը

4/4	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայման ները	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված)	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված)
1	2	3	4	5
1.	Փաստաթղթի անվանումը	Պարտադիր	պարտադիր	Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր>
2.	վճարման պահանջագրի համարը	Պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
3.	ներկայացման ամսաթիվը	Պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը։
4.	Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն	Պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը։ Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է։ Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության։ Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	Պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի հաշվի համարը	Պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀՎՀՀ	Պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմաված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
8.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր	լրացվում է վճարողի կողմից

			լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	
9.	շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն	Պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը։ Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուի ՀԾՀ	Պարտադիր	ոչ պարտադիր (գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում)	(չի լրացվում)
11.	շահառուի ՀՎՀՀ	Պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը	Պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
13.	շահառուի հաշվի համարը	Պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
14.	գումարը (թվերով և բառերով)	Պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
15.	Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)	Պարտադիր	ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում)	(չի լրացվում եւ չի կիրառվում)
16.	արժույթը (բառերով և կոդով)	Պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
17.	գործարքի նպատակը	Պարտադիր	Պարտադիր լրացվում է «որակավորման ապահովման համար» բառերը	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
18.	Վճարման կատարման հիմքերը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի	լրացվում է շահառուի կողմից

			ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի	
